

կան հասարակ գերեզմանի մը ձևը: Բուրգին տեղը պատէ դամբարան մը շինուած է: 1841 էն սկսեալ Գուպպէթ-Բահլիլի աւելցուած է քառակուսի բակ մը միհրապով մը որ կը ծառայէ իսլամներուն իբր աղօթատեղի (Bar. gd. էջ 209-210)

Հրեայ ուխտաւորները կը հաւաքուէին հոն ոչ թէ խումբերով, այլ իւրաքանչիւր ոք համաձայն իր ժամանակին և կամքին:

Յաճախ հոն կը տեսնուին հրեաներ որոնք բուրգէ զանազան գոյներով գերձաններ կ'անցընեն դամբարանին շուրջը և ուրիշներ ալ կը հանեն նախապէս դարձուածները՝ որոնք արդէն սրբազործուած կ'ըլլան և կը նկատուին որպէս բժժանք գործածութեան համար՝ պաշտպանելու հիւանդներ վտանգներէ, մասնաւորաբար կիներ (Han. W. էջ 374-375):

Վերև գրեցինք թէ Ռաքէլի գերեզմանը յարգանքի առարկայ է նաև քրիստոնեաներու համար: Էդարու Ս. Տեղեաց Տօնակարգը այս մասին պահած է ծանօթագրութիւն մը՝ որմէ կը հասկցուի արդարև թէ քրիստոնեաներն ալ Ռաքէլի գերեզմանին ուխտաւորութեան յատուկ օր մը ունէին և մասնաւոր յիշատակութիւն մը որ այս է, Յուլիս 18 ին. Քեթղեհէմի ճանապարհին վրայ, Ռաքէլի գերեզմանը, յիշատակութիւն Ռաքէլի, յիշատակ փոխադրութեան մասանց Ս. Ստեփանոսի, Յովհաննէս Մկրտչի, Զաքարիա մարգարէին, և սուրբ մարտիրոսացն Փոկասու, Տարագոսի, Պրոբոսի և Անդրոնիկոսի(*) (R. Bl. 1914, էջ 460):

(*) Այս երեք վկաներ նահատակուած են Գ. դարուն Անարգաբայի (Կիլիկիա) մէջ: Յերոնիմոսի վկայաբանութիւնը կը յիշատակէ 11 Հոկտեմբերին իբր աւանդական բուական. տարբեր բուականներով